

ՍՓՅՈՒՌԱՅՆ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՈՒՄ

(1982)

Ի Ռ Ի Լ Ղ Ա Ր Ի Ա

Սոֆիայի «նարողնա կուլտուրա» հրատարակչությունը լույս է բնծայել Պարույր Սևակի մեկհատորյակը «Ջրերի լեզուն» խորագրով: Տողացի թարգմանությունը բնագրից կատարել և ժողովածուն կազմել է Հակոբ Կիլիկյանը: Բանաստեղծական թարգմանությունը կատարել են բուլղար հայտնի բանաստեղծներ Անդրեյ Գևրգևանովը, Նիկոլայ Պոլաճիկը և Իվան Դալիթովը: Ժողովածուի նախաբանը գրել է Ն. Պոլաճիկը:

«Պայլաբ», 11 սեպտեմբերի 1982

Ներսես Գասոսյանի «Յուզակ հայերեն ձեռագրացի թուղթարի» գրքում, որը լույս է տեսել 1981 թ., նկարագրված են 91 հայկական ձեռագիր: Բուլղարիայում գտնված այդ ձեռագրերից մեկի մասին մանրամասն տեղեկություն է տալիս «Ներսեսում» տպագրված «Արժեքավոր հայերեն ձեռագիր մը» հոդվածի հեղինակ Հ. Կիլիկյանը: Հոդվածից տեղեկանում ենք, որ «ձեռագիր-մատյանը պատկանելի հատոր մը կներկայացնե՝ 551 թերթերի բաղկացած... Անոր տարրերը Լեւոն Վրա Կահնգի-պիսի հիշատակություններու, որոնք գրված են XV—XX դարերու ընթացքին: Այս մատյանի գրիչ Գրիգոր Բահանյի հիշատակարաններն հայտնի կըլլա, թե ձեռագիրը գրված է 1667—1668 թվականներու ընթացքին... Ձեռագիր-մատյանը հավաքածու մըն է»: Հոդվածում նշվում է նաև, որ ձեռագիրն ունի 750 գլխավորեր, 500 լուսանցքադարեր, նկարներ և խորաններ:

«Ներսես», 18 սեպտեմբերի 1982

«Նարողնա կուլտուրա» հրատարակչությունը լույս է բնծայել Բաֆու Սամվելը շքեղ հրատարակությամբ: Ականավոր վիպասանի կյանքին ու գործին նվիրված վերջաբանի հեղինակն է պրոֆեսոր Հ. Կուսիկյանը:

1974 թ. մինչև այսօր Բուլղարիայում Հակոբ Օրմանյանի թարգմանությամբ լույս է տեսել 13 գիրք՝ հայ անվանի գրողների ստեղծագործություններից: Բաֆու «Սամվելը» այդ շարքի 14-րդն է:

«Գրական րևիք», 10 դեկտեմբերի 1982

Հ Ո Ւ Ն Գ Ա Ր Ի Ա

Հունգարա-սովետական բարեկամության ընկերության Թուգապեշտում լույս տեսնող «Ֆակիա» («Ջահ») երկամսյա հանդեսը ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակի առթիվ իր համարներին մեկը նվիրել է Սովետական Հայաստանին: Հոդվածները նվիրված են Հայաստանի անցյալին ու այսօրվան, գիտությանը, նրանին, արդյունաբերությանն ու շինարարությանը, արվեստին:

«Հայրենիքի ձայն», 25 դեկտեմբերի 1982

Լ Ն Հ Ա Ս Ս Ա Ն

Խնչպես հայտնում է «Աշխարհ» թերթը, Կրակովում գործում է հայկական գիտական ընկերություն, որի նախագահն է անվանի գիտնական Պողոսելի-Մամիկոնյանը: Ընկերությունն ունի իր մասնաճյուղը Վարշավայում, որի մասն է կազմում 1980 թ. մարտին հիմնված հայկական մշակութային միությունը: Միության գործունեությանը մասնակցում են ոչ միայն հայեր, այլև հայ կյանքով, մշակույթով և զրականությամբ հետաքրքրվող լեհեր: Մշակութային միության առաջին ժողովը տեղի է ունեցել 1980 թ. նոյեմբերին, որին մասնակցել են 500-ից ավելի հայեր և լեհեր:

Կրակովի համալսարանում բացվել է հայերեն լեզվի դասընթաց:

Վարշավայի հայկական մշակութային միության վարիչն է պրոֆ. Լեոն Տեր-Օհանյանը, Կրակովից՝ երկու հայրենասեր հայուհիներ՝ Թերեզա Փասաբասը և Կրաթինա Կեռթները:

Իրենց հայ համարողների թիվը Լեհաստանում 15000-ից չի անցնում:

«Աշխարհ», 8 մայիսի 1982

Դ Ո Ւ Մ Ի Ն Ի Ա

Ռուսիայի «Magazin Istoric» հանդեսի 1981 թ. նոյեմբերի համարում հրապարակված է էուսեն Փանիկյանցի «Հայեր և ռուսները դարերու երկայնքին» հոդվածը, որը հեղինակը հակիրճ տվյալներ է հաղորդում ռուսահայերի պատմության վերաբերյալ: Նա նշում է երկու ժողովուրդների ճակատագրերի ընդհանրությունը պարսկական, հռոմեական, բյուզանդական տիրապետությունների դեմ մղված պայքարում: Հոդվածում ասված է, որ Տրանսիլվանիայում հայերը հայտնվել են դեռևս VIII դարում: Հիշատակվում է հայ ճարտարապետության ազդեցությունը ռուսական ճարտարապետության վրա: Վերջում տեղեկություններ կան Բուխարեստի հայոց եկեղեցու և Առաջնորդարանի թանգարանի մասին, որտեղ պահվում են գրքեր, վավերագրեր և զանազան իրեր:

«Եսոբ օր», 13 ապրիլի 1982

Բուխարեստում լույս է տեսել «Օտար գրողներ» խորագրով գիրքը, որը փաստորեն բառարան է կենսագրական և ստեղծագործական հակիրճ ծանոթություններով: Գրքում տեղեկություններ են տրված բոլոր ժամանակների ավելի քան 2300 գրողների, անվանի մարդկանց մասին: Գրքի հեղինակներն են էլենոսորա Ալմոսենինոն, Ռոտիբա Փանտելեն և Կապրիելա Տանցիլը:

Հայ գրականությունը ներկայացված է հետևյալ գրողներով: Խաչատուր Աբովյան, Հակոբ Հակոբյան, Գեորգի Դեմիրճյան, Ավետիք Իսահակյան, Նահապետ Քուչակ, Մեսրոպ Մաշտոց, ԲաճՖի, Սարգսյան, Շիրվանզադե: Ցավալի է, որում է թերթը, որ գրքում չի խոսվում Հովհաննես Թումանյանի և Սայաթ-Նովայի մասին:

«Պայլաբ», 16 հունիսի 1982

Ջենովա ՎԱԿԻԱ

Պրագայում լույս է տեսել Ակսել Բակունցի ժողովածուն, «Սև ցեղերի սերմնացանը» ընդհանուր խորագրով: Գրքի թարգմանիչը և վերջաբանի հեղինակն է հայագետ-վրացագետ Վաղվաթ Զեռնին, որը Ջենովայի խոշորագույն «Օդեսո» հրատարակչության պատասխանատու խմբագիր Կամիլ խորակի հետ միասին նախաձեռնել են այս գործը: Գիրքը ձևավորել և նկարագրողն էլ է Յուլիա Սվոբոդան, որը մինչ այդ նկարագրողն էր հայկական ժողովրդական հեքիաթների, Ավ. Իսահակյանի, Պ. Սևակի շնչերեն ժողովածուները:

«Գրական քերք», 26 փետրվարի 1982

Լ Ի Բ Ա Ն Ա Ն

Մեծ եղեռնի 67-րդ տարեդարձը նշվեց Բեյրութում, ինչպես նաև սփյուռքի հայկական մյուս գաղթօջախներում:

Բեյրութում փակ են եղել հայապատկան բոլոր հաստատությունները և հայկական վարժարանները: Տեղի են ունեցել ուսանողական ցույցեր, եկեղեցիներում՝ հատուկ արարողություններ ի հիշատակ եղեռնի զոհերի: Երիտասարդական կազմակերպությունները ծաղկեպսակներ են դրել նահատակների հուշարձանների վրա: Տեղական և օտար թերթերը առանձին հոդվածներով անդրադարձել են հայկական ցեղասպանության 67-րդ տարեդարձին:

«Շարժում», 19 մայիսի 1982

25 տարի առաջ Բեյրութում, Թեբեյան մշակութային միության նախաձեռնությամբ սկսեց լույս տեսնել «Շիրակ» գրական ամսագիրը, որի շուրջն են համախմբվել Լիբանանի և արտասահմանի այլ գաղթօջախների գրականություն և արվեստի գործիչներ: Պարբերականում տպագրվում են նաև սովետահայ գրողները:

Ամսագրի հիմնադիրներն ու առաջին խմբագիրներն են եղել Զարեհ Մելքոնյանը և Սնեկ Նարգիսյանը: Այժմ ամսագրի խմբագիրն է Ս. Սարգիսյանը:

Շիրակը սերտ կապեր է պահպանում հայրենիքի հետ: «Արևի» հունիսի 5-ի համարում հրապարակված է Հայաստանի գրողների միության շնորհավորական ողջույնի խոսքը «Շիրակի» 25-ամյակի առթիվ, որը ստորագրել են անվանի գրողներ:

«Շիրակի» 1982 թ. հունվար-փետրվարի համարում ամսագրի 25-ամյակի կապակցությամբ տպագրված է խմբագրության անդամ Լևոն Վարդանի հոդվածը՝ նվիրված «Շիրակի» գործունեությանը, որը ասված է, որ «քսանհինգ տարիներու ընթացքին ընթերցողի սեղանին դրվեցան 159 համարներ, որոնցմե 93 հատը միամսյա էին, 46 հատը՝ միացյալ երկամսյա, տասնմեկը՝ միացյալ եռամսյա, մեկը՝ քառամսյա, երկուրդը՝ հնգամսյա և մեկն ալ՝ երկամսյա»: Տպագրվել է 2419 հոդված, «որոնք կպատկանին սփյուռքահայ գրողներու գրիչին, կան 693 անուն գրություն հայրենի դրականության անդամներեն ճառարղված և 155 անուն գրություն ալ վրականության և գեղարվեստի միջազգային դաշտերեն փնջված»: Ամսագրում տրված է 25 տարվա մատենագիտական ցանկը, համապատասխան բաժիններով:

«Արև», 5 հունիսի 1982

ՀՈՒՆԱՍԱՆ

Աթենքում ավելի քան հազար հայեր ցույց են կազմակերպել թուրքական ղեկավարության առջև, պահանջելով ընդունել 1915-ին հայերի դեմ զործադրված ցեղասպանությունը Զուգարաները այնուհետև ծաղկեպսակներ են դրել Աթենքում երեք տարի առաջ կառուցված Ապրիլյան եղեռնի հուշարձանի վրա:

«Շարժում», 19 մայիսի 1982

Ի Ռ Ի Ա

«Աշխարհում» տպագրված է ն. Կեցարյանի հոդվածը՝ նվիրված Ստամբուլի հայ գաղութի ներկա վիճակին: Հեղինակը գրում է, որ Պոզոյան-Վարվառյան վարժարանը, որ 160 աշակերտ է ունեցել, փակված է, լքված է, օրերի օրենքները բացառապես լին թույլատրելի, ոչ թե նոր վարժարանի մը բացումը այլ հինքում անհրաժեշտ նորոգումը: Այս րադաքականության անպատկան է վերացնել հայ գաղութը Թուրքիային: Սահմանափակումները օրինականացնել և բաժանապատկել, որպեսզի գաղութը և զուրոցները չկարենան իրենց հայ զիմագիծը պահել: Հայոց պատմության մասին խոսիլ անկարելի է, խորհրդային Հայաստանի հետ մշակութային հարաբերությունները գրեթե չկան... Ուսուցիչներ և դաստիարակներ ձերբակալվեցան, որոշ շրջան մը ազատ արձակվեցան առանց դատարարության, բայց տեսած եղան իրական բաները... Իսթանպուլում հայ գաղութը, ինչպես կերևի շրջապատի աննպաստ պայմաններու տակ դարգանալու, մշակութային ազատ գործունեություն ցուցաբերելու կարելիությունը չունի: Հողվածագիրն այնուհետև նշում է, որ գաղութի կենսունակության պահպանման գրավականն է Սովետական Հայաստանի գոյությունը: «Համայնագիտարանի մեկ օրինակին մոտորը Բոթանպուլ արդեն երիտասարդության համար խանդավառ խոսակցության նյութ է: «Հայրենիքի ձայնի», «Սովետական Հայաստանի» արտասահմանն բերված մեկ օրինակը ձեռք ձեռք կխլվի: Ցավ է երիտասարդության համար չկարենալ մշակել փոխարաբերություններ Հայաստանի հետ, քանի որ երկրին օրենքները այդ հարաբերությունները չեն թույլատրելու:

«Աշխարհ», 2, 9 հունվարի 1982

«Լրաբերում» կարդում ենք, որ «Թերեզյուման» թերթը 1982 թ. փետրվարի 11-ի համարում ունի Ահմետ Գապարը միտում է հայ ցեղասպանության փաստը և ամեն կերպ փառաբա-

նում է արևմտահայության դահճ Թալեաթ փաշային:

«Լրաբեր», 10 ապրիլի 1982

Արգենտինայում լույս տեսնող «Շարժում» թերթը հայտնում է, որ Անկարայի պաշարման վիճակի հրամանատարության գինվորական ատյանին կողմն ձերբակալվեցավ Պյունթ թեք-նիկ հաստատության տեր նուրեմտին Պյունթ իր հրատարակած «Թուրքիյե ինշաթ Քլավուզու» անուն գրքին մեջ ազգային զգացումները վիրավորող քառույթյունը ըրած ըլլալու ամաստանությունամբ: Հիշյալ գրքին Թուրքիո քարտեսին Արենլյան Անատոլու րաժանմունքին մեջ Հայաստանի ու Քյուրտիստանի տեղ նատկացուցած ըլլալուն համար, գրքին պատասխանատուին դեմ պաշարման վիճակի հրամանատարության գինվորական ընդհանուր դատախազության կողմն հարցաքննություն ձեռնարկվեցավ:

Թերթը «Արարատից» արտատպել է «Անքա-վելի մեղք մը» խորագրով հոդվածը, որտեղ ասված է, որ գիրքը լույս է ընծայվել երեք լեզուներով: Դրբում արենլյան նահանգներից ըրվինքանը, էրզրումը, Ադրնը և Վանը ցույց է տրված որպես Հայաստան, իսկ հարավ-արենլյան մասերը՝ Դիարբեքիրը, Մալաթիան, Սեբասթիոնը որպես Թուրքիստան: Այս բոլորի կապակցությամբ «Թերեզյուման»-ը արտահայտում է իր ցասումը: Այժմ մենք ապրում ենք մի շրջան, գրում է հայկական թերթը, երբ թուրք պաշտոնական պատմագրությունը կղեղծն ու շարափոխ իրողությունները: Հայու հետք իսկ չուղեք գրեթե ամալացած գրավյալ Արևմտահայաստանի մեջ: Պատմական հուշարձաններն իսկ կըքանդի որ... քարերն իսկ չխոսին... Ու դեռ կըժայրհի պնդել, որ բնավ Հայաստան գոյություն չէ ունեցած... Այսպես բարբառող թուրք պետական բանբերներու զիմաց «Պյունթ թեքնիքի» լույս ընծայած քարտեսը, Արենլյան Անատոլուն «Հայաստան» անվանող, զարհուրելի կրնա թվիլ Անգարային:

Դիրքը, թերթի ասելով, պատրաստել է «Թուրքիո առևտրական ու ճարտարվեստական սենյակներու միության նախկին քարտուղար Սապահաթին Ալթաթիա և իր նախագահած խմբագրական մարմինը»:

«Շարժում», 19 մայիսի, 9 հունիսի 1982

Ի Ռ Ա Ն

Փետրվար ամսից իրանահայ ազգային և մշակութային միության երիտասարդական բաժնի կողմից լույս է ընծայվում «Միաձայն» գրա-

Ա Ն Գ Լ Ի Ա

Հ.Բ.Ը.Մ. գեղարվեստական հանձնախումբը կազմակերպել է երեկո՝ նվիրված Հակոբ Պարոնյանի հիշատակին: Պարոնյանի կյանքի և գործի մասին ելույթներ են ունեցել Մանուել Քյոշկերյանը, Կարպիս Ծսայանը: Գեղարվեստական բաժնում կարդացվել են հատվածներ Պարոնյանի երկերից:

«Աշխարհ», 6 նոյեմբերի 1982

Կ Ա Ն Ա Դ Ա

Մոտ 1500 հայեր ցույց են կազմակերպել Կանադայի խորհրդարանի և թուրքական դեսպանատան առջև՝ բողոքելով թուրքական պետության կողմից ծրագրված և գործադրված ցեղասպանության դեմ:

«Շարժում», 19 մայիսի 1982

Ա Մ Ն

Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի հայագիտական ուսումնասիրությանց բաժնի խորհրդի անդամ Անահիտ Օրմանջյանը լույս է ընծայել «Հայաստանը մշակութային խառնուրդում» խորագրով գրքույկը անգլերեն: Տրված է պատմական ակնարկ Հայաստանի անցած ուղու և ներկայի, հայ ժողովրդի սովորույթների, կենցաղի մասին: Առանձին գլուխներ են նվիրված հայոց լեզվին ու գրականությանը, հայկական երաժշտությանը, ճարտարապետությանը, նկարչությանը, դրամներին, դարձարվեստին ու գորգարվեստին: Գրքույկը հարուստ է լուսանկարներով:

«Հայրենիքի ձայն», 4 նոյեմբերի 1981

Միացյալ Նահանգներում Թուրքիայի դեսպան Շյուքրի Էլբերտաղը լոս Անջելեսում, նոյեմբերի 24-ին տեղի ունեցած մի ճաշկերույթի ու հարցազրույցի ժամանակ հայտարարել է. «Զրուարտությունները, թե օսմանյան թուրքերը 65 տարիներ առաջ, Ա համաշխարհային պատերազմի ընթացքին ծրագրված կերպով ջարդեցին Թուրքիո հայ բնակչությանը ղրենք բռնաջնջելու և իրենց հայրենիքը հափշտակելու նպատակով, ամբողջովին անհիմն է»։ հայտնելով այս արտաոռց ելույթի մասին, թերթը ավելացնում է, որ թուրքական դեսպանի այս բացարձակ ստախոսությունը մեծ հուզմունք է առաջացրել ոչ միայն ամերիկահայ համայնքներում, այլև գիտական որոշ շրջաններում:

Սփյուռքահայ մամուլում տպագրվել են մի շարք հոդվածներ՝ ուղղված թուրքական կեղծիքի դեմ: Թերթերը նաև գրում են, որ այն պանդոկը, որտեղ տեղի է ունեցել այդ հարցազրույցը, շրջապատված է եղել ցուցարարներով:

«Նոր օր», 1 դեկտեմբերի 1981

Յրեզնոյում, Ֆիբի Կանլի արվեստի թանգարանում բացվել է IV—XVIII դդ. հայ ճարտարապետության ցուցահանդես: Յուցանմուշները, որ տարիներ առաջ ստեղծվել են Միլանի պոլիտեխնիկ ինստիտուտին կից գործող հայ ճարտարապետության Ազրիանո Ալպագո-Նովելլոյի զլխավորած կենտրոնի և Իտալիայի հայ մշակութային միության ջանքերով, ինչպես նաև Մանուկյան և Բամպակյան ընտանիքների օժանդակությամբ, արդեն ներկայացվել են Ֆրանսիայում, Բելգիայում, Պորտուգալիայում, Ավստրիայում, ԳՅՀ-ում, Լիբանանում, Արգենտինայում, Երանում:

Յուցահանդեսի առթիվ լույս է տեսել Ֆրեդնոյի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Տիգրան Գույումճյանի գրքույկը, ուր նա անդրադառնում է հայ ճարտարապետության անցած ուղուն և նվաճումներին: «Յրեզնոյում տեղի ունեցած այս ցուցահանդեսի կազմակերպիչները միջազգային հասարակայնությանը ներկայացնելով այս կարևոր պատմական հուշարձանները, — ասում է հեղինակը, — միաժամանակ ցանկանում են տարբեր գիտնականների, կառավարությունների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ այս հուշարձանների մի մասը գտնվում է աղետալի վիճակում: Այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Անիի Մայր տաճարը կամ հրաշալի գլուխգործոց Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին փլվելու վտանգի տակ են: Անիի Մայր եկեղեցու գմբեթն սրղեն քանդվել է, իսկ Ս. Խաչինը փլվելու մոտ է, էլ շենք խոսում այն մասին, որ Թուրքիայի տարածքի վրա գտնվող բազմաթիվ ուրիշ հուշարձաններ շարքից հանվել են»:

«Հայրենիքի ձայն», 10 փետրվարի 1982

Կալիֆորնիայի պետական համալսարանը նոյեմբերին կալմակերպել է վիլյամ Սարոյանին

կան, մշակութային և հասարակական հանդեսներ, որոնք իր պարտականությունն է համարում ընթերցողներին ծանոթացնել մայր հայրենիքի հաջողություններին, նվաճումներին ու վերելքին:

«Փյունիկ», 8 մարտի 1982

Ինչո՞ւն էր երբեք միության սրահում կայացել է զրահան երեկո՝ նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանին: Այս ձևանարկությանը համատեղ մասնակցել են Արմեն, Էրերունի, Իրանահայ ազգային և մշակութային, Հրազդան և Վան միությունները: Այս միությունները որոշել են ընթացիկ տարում կազմակերպել հայ զրահան ղեկավարել նվիրված երեկոներ:

«Փյունիկ», 15 մարտի 1982

Յ. Բ. Ա. Ն. Ս. Բ. Ա.

Պրանսիայում վերահրատարակվել է Ժ. Լոբանի L'Armenie entre Byzance et l'Islam depuis la Conquête arabe jusqu'en 886 գիրքը, որը առաջին անգամ լույս է տեսել 1919-ին: Նոր հրատարակությունն իրադրծվել է արաբալուստ, պրոֆ. Մարրիուս Քանարի վերամշակությամբ, որն ավելացրել է բազմաթիվ ծանոթագրություններ, կատարել է որոշ ճշտումներ և հավելվածները հարստացրել է արաբական շրջանի Հայաստանի մասին արաբ պատմագիրների և աշխարհագիրների բազմաթիվ վկայություններով: Գիրքը այս վերամշակմամբ կրկնապատկված է, բաղկացած է 50 էջից: Հրատարակվել է Գալուստ Կյուպեկյան հիմնարկության Հայկական . մատենաշարով: «Փափարկի պիտի ըլլար,— գրում է «Աշխարհը»,— որ այս կարևոր ուսումնասիրությունը թարգմանվեր հայերենի, որպեսզի ամեն տեղ մատչելի ըլլար անոնց ևս, որոնք ծանոթ չեն ֆրանսերենին»:

«Աշխարհ», 16 հունվարի 1982

Ինչպես հայտնում է «Շարժումը», ֆրանսիական մամուլի գործակալությունը հաղորդել է, որ 1915-ին Թուրքիայում կատարված հայ ժողովրդի ցեղասպանության 67-րդ տարեդարձի առիթով Պրանսիայում բազմաթիվ ցույցեր են տեղի ունեցել:

Մարսելի քաղաքապետ Կասթոն Տըֆերը դահերի իշխատակին կանգնեցված հուշակոթողի մոտ տեղի ունեցած հանդիսության ժամանակ իր խոսքն ուղղելով ֆրանսահայ շուրջ 300000 թիվ կաղժող համայնքին՝ ասել է. «Ֆրանսա պիտի օգնի ձեր դատի հաղթանակին հա-

մար, սակայն ձեզմե կխնդրեմ հասկնալ, թե ֆրանսական կառավարությունը չի կրնար ընդունիլ, որ բրաթյան դիմվի ձեր դատին նման վե՛ր դատի մը հաղթանակին՝ համար: Նա հայտնել է նաև, որ ֆրանսիական կառավարությունը հավանություն է տվել Փարիզի կենտրոնում հայկական կոթող կառուցելուն: Ինչպես հայտնում է թերթը, Փարիզի և Անկարայի միջև ստանություն էր առաջացել անցյալ հոկտեմբերին պաշտպանության նախարար Շարլ Հերնյուի կողմից հայ հասարակայնության առջև արված հայտարարության համար, ուր նա ասել է. «Գերման վարչապետ մը ծունկի եկավ ներողություն խնդրելու համար իրենցնրու դեմ նախնական կողմն գործված ոճիրներու համար. ե՛րբ թուրք մը միևնույնը պիտի ընեն»:

«Շարժում», 19 մայիսի 1982

Ֆրանսիայում լույս է տեսել «Հայոց պատմություն» 700 էջից բաղկացած ֆրանսերեն հատորը, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը: Գիրքը ստեղծվել է 16 հայտնի հեղինակների համագործակցությամբ: Այս հատորը պատրաստելուն ձեռնարկել է Սոնյակիի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Ժերար Տետեյանը Մարսելի ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Ֆիլիպ Վոլֆի անմիջական ղործակցությամբ: Հատորին աշխատակցել են ԱՄՆ-ի, Անգլիայի, Մերձավոր Արևելքի և Ֆրանսիայի հայ և օտար մասնագետներ: Առաջաբանը գրել է պրոֆեսոր Ֆիլիպ Վոլֆը:

Իրի լույս ընծայման առթիվ Մարսելի Հայկական բարեգործական ընդհանուր միության սշակութային սրահում կազմակերպվել են ընդունելություն, որին ներկա են եղել հայ և օտար անվանի դեմեր, բազմաթիվ չյուրեր:

«Հայրենիքի ձայն», 21 հուլիսի 1982

Բ. Ե. Գ. Ի. Ա.

Բելգիայի հետուստատեսությունը հայերին նվիրված մի ծրագիր է հաղորդել, որի ժամանակ կանգ է առել հայկական կոտորածների վրա, պնդելով, որ հայերը բնաջնջվել են Թալիսթի, Էնվերի և Ջեմալի հրահանգներով: Ցուցադրվել է «Նահապետ» նկարը:

Հաղորդմանը մասնակցել է Բրյուսելի համալսարանի պաշտոնյաներից Ռուպեր Անսինոն, որը, սակայն, չգիտես ինչու ասել է, թե «Բախտեր կպակսին այն մասին թե օսմանցիները հայերը սպանդի ենթարկված են»:

«Շարժում», 17 մարտի 1982

նվիրված հավաքույթ, որտեղ կարգացվել են մի շարք զեկուցումներ. Սարոյանի որդին՝ Արամ Սարոյանը ներկայացրել է իր հոր առաջին տարիների ստեղծագործությունները՝ մինչև 1930-ական թթ., պրոֆ. Ճ. Պլուշթայնը զեկուցել է «Սարոյանի տեղը ամերիկյան գրականության մեջ» հարցի մասին: Զեկուցումներ են կարգացվել նաև Փարիզից հատուկ հրավիրված իրավարան Արամ Գևորգյանը և համալսարանի հայկական ուսմանց բաժնի պրոֆ. Տիգրան Գույումճյանը:

«ԱԵԼ», 5 հունվարի 1982

Լոս Անջելեսում շուրջ 10000 հայերի մասնակցությամբ տեղի է ունեցել քաղաքում և հատուկ հանդիսություն՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Ապրիլյան նահատակների հիշատակի հարգանքի հանդիսություններ են տեղի ունեցել նաև Բոստոնում և Նյու Յորքում:

«Շաբթում», 19 մայիսի 1982

«Լոս Անջելես թայմզի» մայիսի 19-ի համաժողովում լույս է տեսել Վիլյամ Սարոյանի մասին

հոդված, որը թարգմանաբար և Սարոյանի ներկայացրած տպագրված է «Լրաբերում»:

Հոդվածում ի միջի այլոց կարդում ենք. «Անոր գրությունները կնկատվեն անհավասար... բայց երբ ան իսկապես շարժման մեջ կդնեն իր տաղանդը, պատմությունները կդառնային մարգրիտի կտորներ. կյանքի պատառներ... Եթե պատգամ մը կար Սարոյանի մեջ, ան սլայս էր՝ կյանքը ապրե իր ամբողջությանը մեջ, թորձե շնչել խորունկ, իսկապես համը առ կերածիդ, և նույնիսկ ննջած միջոցիդ, իսկապես ննջե»:

«Լրաբեր», 6 հունիսի 1981

Կալիֆորնիայի հայ գաղութի հարյուրամյակի կապակցությամբ հունիսի 23-ին տեղի է ունեցել լուսանկարչական ցուցահանդեսի բացումը Լոս Անջելեսի քաղաքապետարանում: Ներկա են եղել հայկական գաղթօջախի ներկայացուցիչներ, լրագրողներ, պետական պաշտոնյաներ:

«Նոր օր», 29 հունիսի 1982

Ն. ՎԱՐԻԱՆՅԱՆ